



« ---- »----- 2009 թ.

Հաստատում եմ

Ալավերդու Օրհուս կենտրոնի խորհրդի նախագահ,

Ալավերդու քաղաքապետ Ա. Նալբանդյան


ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մայիս-դեկտեմբեր

Ալավերդու բնապահպանական տեղեկատվական հասարակական (Օրիուս) կենտրոնը իր գործունեությունը սկսել է 01.05.09թ.-ից: Տեխնիկապես հագեցված սկսել է գործել 01.07.09թ.-ից: Ձևավորվել է փորձագետների խորհուրդ: Հաշվետու ժամանակահատվածում Ալավերդու բնապահպանական տեղեկատվական հասարակական կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 36 միջոցառում եւ մասնակցություն ունեցել 8 այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումների: Գործունեության ընթացքում անընդհատ ցուցադրվել են ֆիլմեր՝ եվ տեղական հեռուստաընկերության միջոցով, եվ պարբերաբար կազմակերպվել են ցուցադրություններ կենտրոնում եվ մշակույթի կենտրոնում: Կատարված բոլոր աշխատանքները լուսաբանվել են ԶԼՄ-ների միջոցով՝ մասնավորապես տեղական <Անկյուն գունարած 3> հեռուստաընկերություն, <1, hetq.am, <<Լոռու մարզ>>, <<Թումանյանական աշխարհ>> թերթերում: ԵԱՀԿ Ալավերդու Օրիուս կենտրոնը մասնակցել է մի շարք միջոցառումների, որոնք կազմակերպվել են այլ միջազգային կառույցների / Վորլդ վիժըն, UNEP, UNDP, RTI, GTZ, GTZ եվ BMZ, USAID.../, ՏԻՄ, կրթական ոլորտի, բիզնես ոլորտի/ Վալլեքս խումբ/, տեղական եվ հանրապետական ՀԿ-ների կողմից: Կենտրոնը մայիս – դեկտեմբեր ամիսներին ունեցել է 731 այցելու, որոնցից 16 %-ը ՀԿ-ների ներկայացուցիչները, 35 %-ը՝ պատանիները ու երիտասարդները, 13 %-ը՝ ՏԻՄ ներկայացուցիչները, 27 %-ը՝ հասարակության ներկայացուցիչները, 9 %-ը՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչները:



Կենտրոնի այցելուները օգտվել են հետևյալ ծառայություններից՝

Կենտրոնի ծառայություններից օգտվել են	
Գրադարան	98 մարդ
Տեսադարան	158 մարդ
Տպիչ, պատճենահան	215 մարդ
Ինտերնետ կապ	260 մարդ
Տարբեր միջ.մասնակիցներ	1105 մարդ
ընդամենը	1836 մարդ

Օրհուս կենտրոնի գործունեության եվ Օրհուսի կոնվենցիայի մասին տեղեկացել է մոտավորապես 6.000 – ից ավելի մարդ՝ ոչ միայն Ալավերդի քաղաքից, այլև Թումանյան, Ախթալա, Շամլուղ քաղաքներից, հարակից գյուղերից:

- *Կենտրոնը մշտապես համագործակցում է ներքոհիշյալ կառույցների եվ կազմակերպությունների հետ / տեղեկատվության հավաքագրում, տրամադրում եւ տարածում էլեկտրոնային փոստի, նամակների, հարտարարությունների, էլեկտրոնային կայքերի, հեռուստատեսային հաղորդումներ, ֆիլմերի, հանդիպումների, թերթերում հոդվածների միջոցով / : Ներկայացնում են ցանկը.*

1. ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակ

2. Երեւանի Օրիուս կենտրոն, մարզային Օրիուս կենտրոններ
3. ՀՀ Բնապահպանության նախարարություն
4. ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարություն
5. ՀՀ Առողջապահության նախարարություն
6. ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն
7. Հայէկոմոնիտորինգի Ալավերդու եւ Երեւանի կենտրոններ
8. Լեռնամետալուրգիայի ինստիտուտ
9. Վալլեքս գրուպ, տեղական ու տարածաշրջանային բիզնես ոլորտ
10. Էկոլուր հկ, Էկոդաշինք հկ, տեղական եվ տարածաշրջանի բոլոր հկ-ները
11. Հայիդրոմետ
12. Նոոսֆերիկ կենտրոն
13. Հանրապետական եվ տեղական ՋԼՄ-ներ
14. Ուսումնական, կրթական հաստատություններ
15. Միջազգային կազմակերպություններ/ Վորլդ վիժըն, UNEP, UNDP, RTI, GTZ, GTZ եվ BMZ, USAID..../
16. ՀՀ Լոռու մարզպետարան
17. Մարզային եվ տեղական բժշկական եւ սանիտարահիգիենիկ կենտրոններ
18. ՏԻՄ/ Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Շամլուղ քաղաքներ, տարածաշրջանի գյուղեր/
19. Եկեղեցի / Գուգարաց թեմի առաջնորդարան, Ալավերդու Սբ. Գր. Նարեկացի, Հաղպատ, Սանահին/
20. Վիճակագրական վարչություն
21. Անկախ փորձագետ-մասնագետներ
22. Հասարակության լայն մասսաներ

Կենտրոնը ունի 12 կամավոր: Սկսած հուլիս ամսից կենտրոնում համակարգողների և կամավորների միջոցով անցկացվում են համակարգչային, ինտերնետային և անգլերեն լեզվի ուսուցողական դասընթացներ: Կատարված միջոցառումների մասին տեղեկությունները տեղադրված են Aarhus.am ինտերնետային կայքում:
Ներկայացնում են միջոցառումներն ըստ դասակարգման.

Միջոցառումների ընդհանուր թիվը	Քանակը
	44
<i>Տեղեկատվության մատչելիություն</i>	
Մեմինար հանդիպումներ	26
Աշխատանքային հանդիպումներ	12
<i>Հասարակության մասնակցություն</i>	
Հանրային քննարկումներ	4
Ծառատունկ	2
Մասնակցություն տարբեր քննարկումների	8

Կենտրոնի աշխատանքի արդյունքները.

1	Կենտրոնի մասնակցությամբ, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի, Ալավերդու քաղաքապետարանի եւ UNEP-ի հետ համատեղ մշակվել է Գեո-Ալավերդի ծրագիրը
2	Ալավերդու տարածաշրջանի ՀԿ-ի ցանցի եւ կոալիցիայի ստեղծում, Օրհուս կենտրոնի միջոցով տեղեկատվության փոխանակում
3	Տարածաշրջանի հասարակության ակտիվացում, տեղեկատվական մակարդակի բարձրացում, համագործակցություն ՏԻՄ-ի հետ
4.	Տարածաշրջանի բնապահպանական եւ առողջապահական խնդիրների բացահայտում, վերհանում եվ հետագա աշխատանքների պլանավորում

Անցկացված միջոցառումները.

Ապրիլի 22-ին Ալավերդու քաղաքապետարանը Օրհուս կենտրոնի հետ համատեղ Ալավերդու Հաղթանակի զբոսայգում իրականացրեց Երկրի Օրվան նվիրված միջոցառում: Միջոցառմանը մասնակցում էին Ալավերդու արհեստագործական ուսմանարանի սովորողները, մանկավարժները, քաղաքի բնակիչներ, Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը քաղաքապետարանի աշխատակիցներ: Միջոցառման նպատակը էկոտեղեկացվածության մակարդակի բարձրացումն էր, քաղաքի բարեկարգումն ու կանաչապատումը, որի ժամանակ Օրհուս կենտրոնի համակարգողը մասնակիցների համար դասախոսություն կարդաց՝ «Երկրի օր, շրջակա միջավայր, առողջություն» թեմայով: Հաղթանակի զբոսայգու տարածքում իրականացվեց ծառատունկ: 150 տնկիներից բացի՝ «Արեւորդի» կազմակերպությունը քաղաքի մանկապարտեզներին նվիրեց ծաղիկների սերմեր՝ մանկապարտեզների տարածքներում ցանելու համար: Միջոցառումը լուսաբանեց տեղական՝ «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերությունը: / **Ծառատունկ /**

Կազմակերպիչ՝ Ալավերդու քաղաքապետարան

համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Մայիսի 1-ին Լոռու մարզի Ձորագետ համալիրում տեղի ունեցավ UNEP/ GRIO կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «GEO - ALAVERDI» ծրագրի աշխատանքային քննարկումը: Ծրագրի նպատակն է Ալավերդի քաղաքի համար մշակել ռազմավարական փաստաթուղթ՝ քաղաքի բնապահպանական վիճակի բարելավման ուղղությամբ: Քննարկմանը մասնակցում էին Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը, ԵԱՀԿ Շրջակա միջավայրի հարցերով պատասխանատուն, Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգողը, ներկայացուցիչներ Բնապահպանության և բնօգտագործման նախարարությունից, Տարածքային կառավարման նախարարությունից, ACP ընկերությունից, Հկ-ներից, Hetq.am-ի թղթակիցը: Քննարկումը լուսաբանվել է hetq.am-ում:
/ Աշխատանքային հանդիպում/

Կազմակերպիչ՝ Գ. Նազարյան/ UNEP /, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ

համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Մայիսի 22-ին Ալավերդի քաղաքի դպրոցներում Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ նշվեց Կենսաբազմազանության միջազգային օրը: Կենսաբանության ուսուցիչները դպրոցականներին ներկայացրին բնության պահպանության, ծառերի, ծաղիկների ու կենդանիների խնամքի հետ կապված հմտություններն ու խնդիրները, որից հետո դպրոցների բակերում բարձր դասարանցիները ծաղիկներ ցանեցին, խոստացան անպայման հետեւել ու խնամել ծաղիկները: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ Ռուզաննա Միրզոյան

Մայիսի 31-ին Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ Ալավերդի քաղաքում իրականացվեց միջոցառում՝ «Օր առանց ծխախոտի» թեմայով: Ակցիայի ժամանակ դպրոցականների, կենտրոնի համակարգողների եւ քաղաքի ակտիվ հասարակության միջոցով քաղաքում բաժանվեցին թերթիկների վրա գրված Օրհուս կենտրոնի կոչը, որտեղ եւս մեկ անգամ հիշեցվում էր ծխախոտի վնասների ու նրա օգտագործումից առաջացած հիվանդությունների մասին: Կոչը հնչել և միջոցառումը լուսաբանվել տեղական «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերության եթերում:
/Ակցիա ՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ եւ համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Հունիսի - 1-ին Ալավերդու քաղաքապետարանը քաղաքի մանկապարտեզներում կազմակերպեց մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցեց նաև Օրհուս կենտրոնը: Վերջինիս համակարգողը թիվ 14 մանկապարտեզում երեխաներին լուսաբանեց շրջակա միջավայրի պաշտպանության ու անձնական հիգիենայի մասին, ցանեցին ծաղիկներ և կազմակերպեց կավճանկարչություն «Իմ աշխարհը» թեմայով: Մանկական տոնը շարունակվեց քաղաքի պատկերասրահում և գեղարվեստի դպրոցում: /**Հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ՝ Ալավերդու քաղաքապետարան

համակարգող Ռուզաննա Միրզոյան

Հունիսի 5-ին՝ շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրվա առթիվ, Ալավերդու քաղաքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԵԱՀԿ Ալավերդու Օրհուս կենտրոնի խորհրդի անդամիկ նիստը, որտեղ ելույթ ունեցավ քաղաքապետ Արթուր Նալբանդյանը: Նա խորհրդի անդամներին շնորհավորեց բնության պահպանության միջազգային օրվա առթիվ: Քաղաքապետը Ալավերդին համարեց բնապահպանական թեժ գոտի և այդ ոլորտում կարևորեց երեք հիմնական քաղաքի աղբավայրի, պղնձաձուլական գործարանի կողմից մթնոլորտի աղտոտման և քաղաքի մաքրման կայանի չլուծված խնդիրները: Նա բնապահպանությունը համարեց Ալավերդու ամենալուրջ խնդիրը, կարևորեց Օրհուս կենտրոնի դերը: Նիստում բարձացված այս և այլ հարցեր արձանագրվեցին համակարգողների կողմից: /**Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ և համակարգողներ

Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Հունիսի 12-15 ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում Օրհուս կենտրոնների համակարգողների համար կազմակերպվել էր Էկոլոգիական իրավունքի դասընթաց: Դասընթացի մասնակիցները ծանոթացան Էկոլոգիական իրավունքի՝ որպես ինքնուրույն իրավունքի ճյուղի ձևավորման և զարգացման պատմությանը, միջազգային իրավական փաստաթղթերում և ազգային օրենսդրությամբ ամրագրված մարդու Էկոլոգիական իրավունքներին, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական կառավարման մարմինների համակարգին և իրավասությանը, շրջակա միջավայրի պահպանության կազմակերպչի իրավական մեխանիզմներին, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի իրավախախտումների համար իրավաբանական պատասխանատվության տեսակներին և առանձնահատկություններին, ներկայացվեց Օրհուսի կոնվենցիան:

/Մեմինար՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ ԵՊՀ Էկոիրավունքի գիտակրթական կենտրոն

համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Հունիսի 17-ին Ալավերդու Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ՝ «Անապատացման դեմ պայքարի համաշխարհային օրվա» առթիվ Ալավերդու թիվ 13 մանկապարտեզում կազմակերպվեց BBS- ի կողմից պատրաստված՝ «Մեր բնաշխարհը» ճանաչողական տեսաֆիլմի ցուցադրումը: Ֆիլմի դիտումից առաջ նախակրթարանի սաների հետ ակտիվ ու հետաքրքիր գրույց անցկացվեց՝ «Իմ շրջապատի կանաչ տարածքն ու նրա պահպանությունը» թեմայով: Միջոցառման ընթացքում կարևորվեց Էկոդաստիարակությունը, մանուկների դերը բնության պահպանության, առողջության ու մաքուր շրջակա միջավայր ունենալու գործում:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հունիսի 25 ին Ալավերդու Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) փոքր դրամաշնորհային ծրագրերի խորհրդատվական հանդիպումը: Ծրագրի նպատակն էր կենսաբազմազանության պահպանության, կլիմայի փոփոխությքն հետևանքների մեղմման, հողերի դեգրադացիայի կանխարգելման եւ կայուն օրգանական աղտոտիչների արտանետումների նվազեցման կիզակետային ոլորտներում աջակցել հասարակական ու համայնքային կազմակերպությունների նախաձեռնություններին: Հանդիպմանը մասնակցում էին ՀԿ-ների ներկայացուցիչներ , քաղաքապետարանի աշխատակիցներ: ԳԷՀ ՓԴԾ-ի Ազգային համակարգողը ներկայացրեց ծրագրի: ԳԷՀ ՓԴԾ-ի Ազգային Ղեկավար Կոմիտեի անդամները պարզաբանումներ եւ խորհուրդներ տվեցին ծրագրի կազմման և ներկայացման վերաբերյալ: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հուլիսի 2-3-ին հանդիպում նախկին <<Սանես ԳՄԳ>>-ի ղեկավարների հետ, որի նպատակն էր պարզել մկնդեղի գերեզմանոցի հետ կապված որոշակի հարցեր, տվյալների հավաքագրում եւ արձեղություն ալավերդու Մադան թաղամաս տանող ճանապարհի 1 կմ-ի վրա գտնվող մկնդեղի գերեզմանոց: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հուլիսի 9-ին Օրհուս կենտրոնում հանդիպում կենտրոնի կամավորների հետ, ընթացիկ հարցերի քննարկում,առաջարկներ, հետագա աշխատանքների պլանավորում: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հուլիսի 10-ից կենտրոնում կազմակերպվում են անգլերեն լեզվի եվ համակարգչային դասընթացներ՝ կենտրոնի կամավորների կողմից, ապահովվում է աջակցություն եվ մասնակցություն << Երիտասարդական ամառ 2009>> Ալավերդի քաղաքում Երիտասարդական միության կողմից կազմակերպվող միջոցառումների անցկացման համար: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հուլիսի 25 ին Ալավերդու Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ սեմինար- խորհրդակցություն՝ «Թեղուտը և մենք» թեմայով: Հանդիպման նպատակը Թեղուտի հանքավայրի վերաբերյալ տարածաշրջանի երիտասարդների և հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացումն էր: Սեմինարին հրավիրված էին Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը, www.hetq.am կայքի թղթակիցը, տեղական «Անկյուն գումարած 3» հեռուստաընկերությունից, տարածաշրջանի ուսանող-երիտասարդները՝ ի դեմս «Ալավերդու երիտասարդական միության», քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը, փորձագետ-մասնագետներ, «Վալլեքս» խմբի ընկերությունների նախագահի ռեֆերենտը, «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ -ի Շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետը, ACP ընկերության բնապահպանական հարցերով պատասխանատուն և «Թեղուտ» ՓԲԸ-ի տարածաշրջանային տնօրենը: Սեմինարի ընթացքում մասնագետների ներկայացրած տեղեկությունների վերաբերյալ ծավալվեց հարց ու պատասխան: Խորհրդակցության վերջում «Ալավերդու երիտասարդական միության» ներկայացուցիչն առաջարկեց հաջորդ անգամ կազմակերպել քննարկում Թեղուտի թեմայով՝ այս անգամ արդեն «SOS Թեղուտի» անդամների մասնակցությամբ: /**Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հուլիսի 30-ին Օրհուս կենտրոնում հանդիպում <<Կանաչ արահետ>> ՀԿ ներկայացուցիչների հետ, որտեղ ներկայացվել է հկ-ի եւ Ալավերդու Օրհուս կենտրոնի գործունեության, խնդիրների ու նպատակների մասին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հատազգա համագործակցության համար: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Ռուզաննա Միրզոյան

Հուլիսի 31-ին սեմինար-հանդիպում Ալավերդու Բժշկական Կենտրոնում <<Շրջակա միջավայր եւ առողջություն>> թեմայով, որի նպատակն էր ներկաների շանթացնել Օրհուսի կոնվենցիային, մարդու անվտանգ ապրելու իրավունքին, արդի վտանգներին: Մասնակիցներին ներկայացվեց եւ քննարկվեց վերջին տարիների հիվանդացությունների վիճակագրությունը:

/Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ եւ համակարգող Ռուզաննա Միրզոյան

Օգոստոսի 28-ին Օրհուս կենտրոնում ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի /UNEP/ GRID-Arendal կենտրոնի համակարգող ներկայացրեց՝ Գեո քաղաքներ՝ ծրագրի շրջանակներում ստեղծված Գեո Ալավերդի՝ Շրջակա միջավայրը և քաղաքային զարգացումը նախագծի մշակված տարբերակը: Հանդիպմանը մասնակցում էին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի բնապահպանական հարցերով պատասխանատուն, Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը, Հկ-ների ներկայացուցիչներ, Օրհուս կենտրոնի փորձագետների խորհրդի անդամներ, ՋԼՄ, հասարակության և բիզնես ոլորտի ներկայացուցիչներ: Կարևորվեց բնապահպանական, առողջապահական և անվտանգության տեսանկյունից Ալավերդու ապագայի հեռանկարները: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/ Կազմակերպիչ՝ Գ. Նազարյան/ UNEP /, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ**

համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Սեպտեմբերի 4-ին Ալավերդու թիվ 13 մանկապարտեզում, որտեղ գործում է նաև համայնքային ներառական կենտրոնը, Օրհուս կենտրոնը կազմակերպել էր հանդիպում նախակրթարանի մանկավարժների հետ: Հանդիպման նպատակն էր խթանել եւ նպաստել մանուկների բնապահպանական դաստիարակության գործին, բնապահպանության պարապմունքներին ավելի շատ ժամանակ հատկացնել, անընդհատ կազմակերպել ֆիլմերի դիտումներ՝ մանկավարժների եւ Օրհուս կենտրոնի ակտիվ գործունեության միջոցով: Ֆիլմերն ու համապատասխան գրականությունը խոստացավ տրամադրել Օրհուս կենտրոնը: Միաժամանակ ընդունվեց դաստիարակների պարբերաբար համագործակցության առաջարկը: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ էւ համակարգող Անուշ Էվոյան

Սեպտեմբերի 9-ին Ալավերդու հասարակության ներկայացուցիչների հետ միասին Ալավերդու Օրհուս կենտրոնը այցելություններ կազմակերպեց մի քանի քարի արտադրամասեր: Տարածաշրջանի մեր այցելած արտադրամասերում բնապահպանական լուրջ խնդիրներ կային՝ կապված քարի մնացորդ-թափոնների, ջրօգտագործման և ջրահեռացման համակարգի հետ: Արտադրամասերի ղեկավարների և աշխատակիցների հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց հաճախակի հանդիպումների, սեմինարների, գրականության և բնապահպանական օրենսդրության տրամադրման հարցերով: **/ Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ էւ համակարգող Անուշ Էվոյան

11.09.09-ին Ալավերդու Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ սեմինար « ԵԱՀԿ կառույցը և առաքելությունները, Օռհուսյան կոնտենցիայի առանձնահատկությունները», «Առողջ և անվտանգ ապրելու գաղափարը առկա սպառնալիքների առկայության պայմաններում:» Թեմաները լուսաբանեցին «Խազեր» ՀԿ-ի նախագահ Ա. Համբաձումյանի և դիվանագիտության ասպառեզի գործիչ Ռ.Խումարյանի կողմից: Մասնակիցները՝ հանրակրթական և միջին մասնագիտական հաստատությունների մանկավարժներ, ուսանողներ, բժիշկներ, Խորհրդի անդամներ, համայնքային ծառայողներ, հասարակության ներկայացուցիչներ, թվով 31 մասնակից: Մանկավարժներին բաժանվեցին ուսումնական ձեռնարկներ «Մենք և մեր Մոլորակը» անվանումով դասընթացներ կազմակերպելու համար, ներկայացվեցին վիդեո-նյութեր: **Առանձնահատուկ քննարկվեց Էկոլոգիայի տարածումը հասարակության տարբեր շերտերում: /Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ և համակարգող Ռուզաննա Միրզոյան

Սեպտեմբերի 16-ին Լոռու մարզկենտրոն Վանաձորում տեղի ունեցավ Գերմանական BMZ եւ GTZ կազմակերպությունների եւ Ալավերդու քաղաքապետարանի հետ համատեղ իրականացվող 'Future for Alaverdi' ծրագրի մասնակցության նախնական քննարկումը, որին մասնակցում էին Ալավերդու փոխքաղաքապետը, Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Ա. Էվոյանը, Վանաձորի Երիտասարդ տնտեսագետների միության ներկայացուցիչը, ՀԿ-ների եւ Վանաձորի քաղաքապետարանի աշխատակիցներ: Քննարկման ընթացքում առաջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ: Ծրագիրն ակնկալում է Ալավերդու կայուն տնտեսական զարգացման ռազմավարական իրատեսական ծրագրի հստակ մշակում: **/ Հասարակական քննարկում/**

Կազմակերպիչ և համակարգող Անուշ Էվոյան

Սեպտեմբերի 16 –ին Ալավերդու Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ քաղաքի թիվ.1 դպրոցում անցկացվեց բարձր դասարանի աշակերտների համար դաս-քննարկում, որում լուսաբանվեց ԵԱՀԿ կառույցի առաքելությունը , անվտանգության գաղափարը, Օրհուս կենտրոնի դերը տեղեկատվության բարձրացման գործում: Լուսաբանվեց օգոնային շերտի կարևորություն մարդու, կենդանական, բուսական աշխարհի առողջության համար: Դասը ուղեկցվում էր դիտումով՝ Պահպանելով օգոնային շերտը՝ ֆիլմի և՝ Օզգի օգոն " մուլտֆիլմի դիտումով: Կարևորվեց մարդու անվտանգ ու առողջ ապրելու գաղափարը: Միջոցառումը լուսաբանվեց " < +3 " տեղական հեռուստաալիքով: Հեռուստաալիքի միջոցով ֆիլմը և մուլտֆիլմը կրկին ցուցադրվեցին եթերում օգոնային շերտի պահպանողիության անհրաժեշտության մասին ավելի շատ մարդկանց իրազեկելու նպատակով: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ և համակարգող Ռուզաննա Միրզոյան

Մեպտեմբերի 18-ին Ալավերդու Օրհուս կենտրոնը շարունակեց միջոցառումները Օգոնային շերտի պաշտպանության միջազգային օրվա առիթով: Այս անգամ նախադպրոցական տարիքի երեխաների համար՝ կարևորելով Էկոմշակույթի և գրագետ մտածելակերպի ձևավորումը վաղ մանկական հասակից: Թիվ 14 մանկապարտեզի սաներն իմացան իրենց մոլորակին նրա պաշտպանիչ շերտի մասին: Հետաքրքրությամբ դիտեցին մուլտֆիլմ Օզգի Օզոնի մասին: Ծանոթացան թեմային վերաբերվող կոմիքսներին, մանկական նկարների ժողովածուին: Հետո հարց ու պատասխանի միջոցով երեխաները տեղեկացան անձնական հիգիենայի անհրաժեշտության և տարբեր հիվանդություններից պաշտպանվելու մասին: Մանուկները նկարեցին իրենց պատկերացումն առողջ, պաշտպանված Երկրի և մարդկանց մասին:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ և համակարգող Ռուզաննա Միրզոյան

Մեպտեմբերի 19-ին Ալավերդու քաղաքապետարանում Գերմանական GTZ միջազգային կազմակերպությունը՝ Երիտասարդ կանանց ասոցիացիայի՝ հետ համատեղ կազմակերպել էր սեմինար-հանդիպում, որտեղ ներկայացվեց ProSME՝ Տեղական տնտեսական զարգացման՝ ծրագիրը: Մեմինարին մասնակցում էին ՏԻՄ, բիզնես և կրթական ոլորտների, Ալավերդու Օրհուս կենտրոնի, Ալավերդու հիմնարկ - ձեռնարկությունների ներկայացուցիչներ, հաշվապահներ, հասարակության և ԶԼՄ ներկայացուցիչներ: Ծրագրի նպատակն է պետական և բիզնես ոլորտների և հասարակության անմիջական մասնակցությամբ երկուսից երեք շաբաթվա ընթացքում մշակել մի ռազմավարություն, որը կրերի համայնքի տնտեսական զարգացման ծրագրի իրականացման՝ փոքր քայլերով, նոր առաջարկներով ու խնդիրների վերլուծության միջոցով: Կարևորվեց նաև հայաստանյան այլ համայնքների և միջազգային երիրների փորձը: Ծրագիրը կշարունակվի երեք շաբաթ:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ GTZ միջազգային կազմակերպություն, <<Երիտասարդ կանանց ասոցիացիա>> ՀԿ համակարգող Անուշ Էվոյան

Մեպտեմբերի 19-26-ը համայնքի և տարածաշրջանի մի շարք կրթական հաստատություններում Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ և Ալավերդու հոգեւոր հովվի անմիջական մասնակցությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ՝ նվիրված Օզոնի շերտի պաշտպանությանը: Միջոցառումներն ուղեկցվեցին օզոնի մասին պատմող ֆիլմերի, Օզի Օզոնը՝ մուլտֆիլմի դիտումներով, բնապահպանական գլոբալ խնդիրների մասին գրույցներով: Սովորողներն ու մանկավարժները տեղեկացան միջազգային կոնվենցիաների, Մոնրեալի արձանագրության, ՀՀ բնապահպանական մի շարք օրենքների հետ, նրանց տրվեցին Խազեթ ՀԿ-ի կողմից տրամադրված բնապահպանական պաստառներ: Օրհուս կենտրոնն առաջարկեց պարբերաբար օգտվել կենտրոնի գրադարանից և մի շարք բնապահպանական-տեղեկատվական ինտերնետային կայքերից: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ և համակարգող Անուշ Էվոյան

Սեպտեմբերի 23-ին փորձի փոխանակաման նպատակով Գյումրու Օրհուս կենտրոնում կազմակերպվեց հանդիպում, որին մասնակցում էին Ալավերդու և Վանաձորի Օրհուս կենտրոնների համակարգողները, Գյումրու կենտրոնի կամավորները: Գյումրիի Օրհուս կենտրոնի համակարգողը մանրակրկիտ ներկայացրեց կենտրոնի աշխարանքներն ու գործունեությունը, քննարկվեցին ընթացիկ հարցեր, եղան բազմաթիվ պարզաբանումներ: Հանդիպման ժամանակ որոշվեց հանրապետության մյուս կենտրոնների հետ ևս համագործակցությունն ակտիվացնել և հաճախակի քննարկումներ կազմակերպել: / **Աշխատանքային հանդիպում** /

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 2-ին Ալավերդու Օրհուս կենտրոնում կազմակերպվել էր հանդիպում Երեւանի Հյուսիսային Համալսարանի Թումանյան մասնաճյուղի, Ալավերդու պետական քոլեջի, Եվրոպական քոլեջի Ալավերդու մասնաճյուղի, Ալավերդու Արհեստագործական Ուսումնարանի ուսանողների ու դասախոսների հետ: Թեման՝ ԵԱՀԿ առաքելությունը, գործունեությունը եւ Օրհուսի կոնվենցիան: Հանդիպման նպատակն էր համայնքի ուսանողներին եվ մանկավարժներին մանրամասն տեղեկացնել միջազգային կազմակերպություններին, մասնավորապես՝ ԵԱՀԿ-ին, եվ միջազգային կոնվենցիաներին՝ շեշտը դնելով Օրհուսի կոնվենցիաի վրա: Սեմինարի ժամանակ մասնակիցներին համակարգչային տարբերակով՝ Power Point Presentation տարբերակով ներկայացվեց ԵԱՀԿ պատմությունը, գործունեությունը, առաքելությունը, մոտեցումները: Իրավաբան Սասուն Խեչումյանը ներկայացրեց Օրհուսի կոնվենցիան՝ իր հոդվածներով, գործունեության շրջանակներով ու կարելոթություններով: Սեմինարի ընթացքում ծավալվեց բուռն քննարկում, եղան բնապահպանական, իրավաբանական եվ այլ ոլորտներին վերաբերող բազմաթիվ հարցերի պարզաբանումներ: / **Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն** /

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 5-ին Ալավերդու Օրհուս կենտրոնը կազմակերպեց և անցկացրեց լեկցիա-քննարկում Ալավերդու արհեստագործական ուսումնարանում "Էկոլոգիա և առողջություն" թեմայով: Թեման ընտրվել էր ուսանողների ցանկությամբ և քիմիայի ու կենսաբանության դասավանդողի խնդրանքով: Սկզբում ակնարկվեց Կենդանիների պաշտպանության համաշխարհային օրվա, Միջավայրի պաշտպանության միջազգային օրվա և էկոլոգիական օրացույցի մասին: Հետո լուսաբանվեց առողջության պրոբլեմն ավելի ու ավելի դեգրադացվող շրջակա միջավայրում իր նոր բիոգեոքիմիական բովանդակությամբ, մարդու անվտանգ ապրելու պրոբլեմը, Օրհուսի կոնվենցիայի կարևոր դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում: Թեմայի ծավալուն լինելու պատճառով ավելի մանրամասն ներկայացվեց գլոբալ տաքացումը, կլիմայի փոփոխությունը և այդ պատճառով մարդուն սպառնացող հիվանդությունները: Դիտվեց 'Կլիմայի փոփոխություն' ֆիլմը: Կրթարանի սաների խնդրանքով լուսաբանվեց նաև ծխելու հետ կապված հիվանդությունները: Եղան բազմաթիվ թեմատիկ հարցեր և կենտրոնը պարտավորվեց շարունակել լուսաբանությունը պարբերաբար: / **Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն** /

Կազմակերպիչ եւ համակարգող Ռուզաննա Միրզոյան

Հոկտեմբերի 7-ին Ալավերդու Օրհուս կենտրոնում ՏԲԿ նախաձեռնության իրականացման շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում՝ Հոդերի դեգրադացիայի մեղմացման եւ Հարավային Կովկասում աղքատության դեմ պայքարի համար հողային ռեսուրսների կայուն կառավարում: Հանդիպմանը մասնակցեցին Ալավերդու քաղաքապետը, <<Կանաչ արահետ>> գյուղատնտեսության աջակցության ՀԿ-ի նախագահը, Էկոլոգիական փորձաքննության միջազգային փորձագետը, Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգողները, Ալավերդու քաղաքապետարանի աշխատակիցները: Քննարկվեցին տարածաշրջանի բնապահպանական խնդիրները, կարևորվեց հողերի դեգրադացիայի խնդիրը, բացասական ազդեցությունը բնակչության, նրանց տնտեսության և սոցիալական վիճակին: Հանդիպմանը հաջորդեց դաշտային այցելությունները, որտեղ ներկայացվեց հողի դեգրադացիայի առավել զգայուն տարածքներ, որը հետևանք էր սելավների, սողանքների, գործարանի գործունեության հետևանքների ոչ ճիշտ մշակության և անտառահատման: **/Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ եւ համակարգողներ Ռ. Միրզոյան, Ա. Էվոյան

Հոկտեմբերի 9-ին Ալավերդու Սայաթ-Նովայի անվան դպրոցում Օրհուս կենտրոնը միջին դասարանների աշակերտների համար կազմակերպել էր սեմինար-հանդիպում՝ Իմ շրջակա միջավայրը՝ թեմայով: Հանդիպման ժամանակ ներկայացվեցին տեղեկություններ ԵԱՀԿ-ի, Օրհուս կենտրոնի և գլոբալ Էկոլոգիական պրոբլեմների մասին: Ակտիվ երկխոսության միջոցով երեխաները առաջ քաշեցին մեր քաղաքի բնապահպանական խնդիրները և որոշվեց ֆիլմերի, ինտերնետի, լրացուցիչ • րականության, էքսկուրսիաների միջոցով ավելի մոտիկից ծանոթանալ ներկայացված խնդիրներին: **/Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 10-ին Ալավերդու թիվ 12 դպրոցում կազմակերպվեց սեմինար- դասախոսություն դպրոցի 8-10-րդ դասարանցիների համար՝ Կլիմայի փոփոխությունը որպես հիմնախնդիր՝ թեմայով: Հանդիպման ժամանակ աշակերտները ծանոթացան մի շարք Էկոլոգիական գլոբալ խնդիրների ու միջազգային կոնվենցիաներին: Հատկապես ուշադրություն դարձվեց Կլիմայի փոփոխության, դրա պատճառների, հետեւանքների ու ազգային զեկույցների վրա: Սեմինարի վերջում աշակերտները որոշեցին ստեղծել Պատանի բնասերի՝ խմբակ և ակտիվորեն համագործակցել Օրհուս կենտրոնի հետ: **/Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 10-ին Ալավերդու Ա. Միկոյանի անվան դպրոցի 9-11 դասարանների աշակերտները դասղեկների հետ միասին դիմել էին Օրհուս կենտրոն՝ դպրոցում կազմակերպելու Կլիմայի փոփոխությունն ու ջեռուցման համակարգերը թեմայով հանդիպում կազմակերպելու նպատակով: Հանդիպման ժամանակ դպրոցականներին ներկայացվեց վերոհիշյալ թեմայով դասախոսություն, այնուհետև պարզաբանումներ տրվեցին առաջացած հարցերին: Աշակերտները ներկայացրին իրենց նախաձեռնությունը՝ դպրոցի լոկալ ջեռուցման ծրագրի հետ կապված, այնուհետև որոշեցին Օրհուս կենտրոնի աջակցությամբ դիմել միջազգային կազմակերպություններին եւ պատկան մարմիններին, որպեսզի անպայման կարգավորեն դպրոցի լոկալ ջեռուցման հարցը: Բանն այն է, որ դպրոցը գազաֆիկացված չէ եւ մինչ այժմ այն ջեռուցվում է փայտով: Հոկտեմբերի 21-ին դպրոցականները եղան Օրհուս կենտրոնում, որտեղ նրանք ավելի մանրամասն տեղեկացան միջազգային կազմակերպությունների, մարդու իրավունքների մասին, ինտերնետից եւ համապատասխան գրականությունից օգտվելու միջոցով փորձեցին գտնել այդ նախաձեռնության հետ կապված իրենց հետաքրքրող մանրամասներ: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/ Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան**

Հոկտեմբերի 12-ին Եվրոպական քոլեջի Ալավերդու մասնաճյուղում Օրհուս կենտրոնը կազմակերպել էր միջոցառում քոլեջի իրավագիտության ֆակուլտետի ուսանողների համար: Միջոցառման թեման ընտրվել էր ուսանողների առաջարկով՝ Մենք պարտավոր ենք ապրել մաքուր շրջակա միջավայրում: Ներկայացվեցին և քննարկվեցին գլոբալ և տեղական էկոլոգիական խնդիրները, շրջակա միջավայրում կատարվող տարաբնույթ փոփոխությունները, ԵԱՀԿ գործունեությունն ու սկզբունքները, միջազգային ու ազգային բնապահպանական օրենսդրական դաշտը, մասնավորապես՝ Օրհուսի կոնվենցիան:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/ Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 15-16-ին Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգողները մյուս կենտրոնների աշխատակիցների հետ մասնակցեցին Խազեր՝ Էկոլոգա-մշակութային ՀԿ-ի կազմակերպած Դեպի Կոպենհագեն՝ Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի կողմերի 15-րդ նստաշրջանի շեմին խորագրով միջազգային կոնֆերանսին: Այն կազմակերպվել էր WWF-ի, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ՀՀ բնապահպանության նախարարության աջակցությամբ: Մասնակցում էին հյուրեր արտերկրից, ՀՀ նախարարություններից, միջազգային ՀԿ-ներից, միջազգային ու ազգային փորձագետներ, շահագրգիռ կազմակերպություններից և ԶԼՄ-ներից: Կոնֆերանսին հնչեցին ելույթներ և կարծիքներ, որոնց մի մասին տարբեր տեսակետներով անդրադարձան ազգային ու միջազգային փորձագետները: Նշվեց, որ առաջարկված մեխանիզմները Հայաստանի տնտեսության համար արդյունավետ չեն և մեր պայմաններում չեն կարող գործել: Կլիմայի փոփոխության դեմ պայքարի նոր ծրագրերն ու մեխանիզմները կարևորելով՝ ԵԱՀԿ դեսպանն իր խոսքում նշեց այդ երևույթի վրա աշխարհի բևեռվածության ու ԵԱՀԿ-ի ակտիվ մասնակցության, մասնավորապես՝ անվտանգության ապահովման առաքելության մասին: Միջոցառման կազմակերպիչները խնդրեցին առաջարկները ներկայացնել գրավոր, որպեսզի մշակվեն և Հայաստանի անունից ներկայացվեն Կլիմայի փոփոխության կոնվենցիայի կողմերի 15-րդ նստաշրջանի մասնակիցներին: Կոնֆերանսի շրջանակներում

կազմակերպվեց նաև այցելություն Նուբարաշենի աղբավայր և Լուսակերտ, որի նպատակն էր ծանոթանալ Հայաստանում գործող ՄԶՍ հաջողված ծրագրերին: Մի դեպքում աղբի, մյուս դեպքում թոչնաղբի հումքով կենսագազի ստացման ջերմոցային գազերի տասնյակ անգամներ նվազեցնելու նոր մեխանիզմները կոնֆերանսի մասնակիցներին ներկայացրին մասնագետները:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ Խազեր՝ Էկոլոգա-մշակութային ՀԿ

համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 22-ին Ալավերդիում էր Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի կլիմայի փոփոխության վերաբերյալ գործողությունների ցանցի համակարգող Իրինա Ստավչուկը: Նա ծանոթացավ քաղաքի բնապահպանական խնդիրներին, քննարկվեցին հարցեր կլիմայի փոփոխության վերաբերյալ, մանրամասնորեն ծանոթացավ Ալավերդու Օրհուս կենտրոնի գործունեությանն ու կարելորեց կենտրոնի դերը համայնքի զարգացմանն ու հետագա բնապահպանական առաջընթացի գործում: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 24-ին Օրհուս կենտրոն այցելություն: Աջարիայի Քոբուլթիի եւ Ալավերդու քաղաքապետարանները իրենց եղաբայրությունն ամրապնդելու նպատակով պարպերաբար փոխադարձ այցելություններ են կազմակերպում: Այս անգամ Ալավերդիում հյուր էին Քոբուլթեթի դպրոցականները, ովքեր այցի շրջանակներում եղան նաև Ալավերդու Օրհուս կենտրոնում: Հյուրերը ծանոթացան ԵԱՀԿ-ի, Երևանյան գրասենյակի, մարզային Օրհուս կենտրոնների գործունեությանն ու նպատակներին: Աջարացիները նույնպես խոսեցին իրենց քաղաքի բնապահպանական մի քանի առավել կարևոր խնդիրների մասին, խոստացան անպայման նպաստել ու իրենց ներդրումն ունենալ երկու քաղաքների բնապահպանական խնդիրներին առնչվող հարցերում: / **Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 26-28-ին բնապահպանական ոլորտով հետաքրքրված անձանց ՆՓԱԿ-ում հնարավորություն էր ընձեռնված ծանոթանալու շրջակա միջավայրի կառավարման հարցերում գերակշիռ դերակատարում ունեցող կազմակերպությունների գործունեությանը: Տեղում կարելի էր ծանոթանալ թափոնի, թղթի վերամշակմանը, արևի էներգիայի օգտագործման տեխնոլոգիաներին, տեղեկանալ, որ հանրապետությանն անհրաժեշտ են ինչպես էկոլոգներ, այնպես էլ կենսաբաններ, քիմիկներ: ԵԱՀԿ գրասենյակի տաղավարում մասնավորապես ներկայացված էին Օրհուս կենտրոններն ու Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը: Ցուցահանդեսի պաշտոնական բացմանը ներկա ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տնտեսական և բնապահպանական ծրագրերի պատասխանատուները կարևորեցին նմանատիպ միջոցառումները մարդկանց կրկին իրազեկելու առումով: Նշեցին, որ Օրհուս կենտրոնների գործունեությունն ուղղված է յուրաքանչյուր քաղաքացու՝ ստիպելով գիտակցել իր դերն այն դրական փոփոխությունների նկատմամբ, որոնք մենք բոլորս ուզում ենք տեսնել մեր շրջակա միջավայրում: ԵԱՀԿ

երևանյան գրասենյակի պատասխանատուն ներկաներին կոչ արեց համախմբել իրենց ուժերը հանուն ժողովրդավարության, արժանապատվության և իրավունքի: Օրհուս կենտրոնների աշխատակիցները ցուցահանդեսի այցելուներին ներկայացրին իրենց գործունեությունը ցուցապաստառների, լուսանկարների ու էլեկտրոնային ցուցադրությունների միջոցով:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ <<Արևոտրդի>> ՀԿ, համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Հոկտեմբերի 28-29-ը Երևանում տեղի ունեցավ հասարակական կազակերպությունների ազգային կոնֆերանսը՝ Օրհուսի կոնվենցիան և հասարակության մասնակցությունը՝ թեմայով: Մասնակցեցին Ուկրաինայի՝ Հասարակությունը և շրջակա միջավայրը՝ ռեսուրսային վերլուծական կենտրոնի ներկայացուցիչը և Եվրոպական Էկո-ֆորումի նախագահը, ներկայացուցիչներ ԵԱՀԿ Երևանի գրասենյակից, ՀԿ-ներից, ՀՀ բնապահպանության նախարարությունից, ինչպես նաև Օրհուս կենտրոնների համակարգողները:

Մասնավորապես քննարկվեցին հանրության բնապահպանական գիտակցության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում Օրհուսի կոնվենցիայի համատեքստում, ՀԿ-ների գործունեությունը Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում, բողոքարկման միջազգային ընթացակարգը Էկոլոգիական համաձայնագրերի շրջանակներում և այլ հարցեր: Օրհուսի կոնվենցիայի իրականացման գործընթացում Օրհուս կենտրոնների դերի մասին ներկայացրեց Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգողը : **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ Խազեր՝ Էկոլոգա-մշակութային ՀԿ

համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Նոյեմբերի 4-ին Ծաղկաձորում Հայաստանի պաշտոնյաները և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները մեկնարկեցին տեղական ինքնակառավարման մակարդակում բնապահպանական մարտահրավերների շուրջ 2-օրյա սեմինարը: Միջոցառումը կազմակերպել էր Նորվեգիայի Ֆրիդոլմ Լանսեն ինստիտուտը ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ, և ՀՀ բնապահպանության և տարածքային կառավարման նախարարությունների հետ համագործակցությամբ: Տեղական ինքնակառավարման իշխանությունների, մարզային բնապահպանական և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները սեմինարի ժամանակ քննարկեցին տեղական ինքնակառավարման մակարդակում բնապահպանական իրավունքների պաշտպանման ուղիները, բնապահպանական կառավարման միջազգային փորձը և Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի իրագործումը: ԵԱՀԿ-ի աջակցությամբ գործող բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնների /Օրհուս կենտրոններ/ ներկայացուցիչները մասնակցեցին սեմինարին: Մեմինարի մասնակիցները բնապահպանական կառավարման արդյունավետ մոտեցումներ առաջ բերեցին: Այս միջոցառումը նպաստեց Օրհուս կենտրոնների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ավելի ակտիվ համագործակցությանը: **/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ Նորվեգիայի Ֆրիդոլմ Լանսեն ինստիտուտ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, համակարգող Անուշ Էվոյան

Նոյեմբերի 6-ին Ալավերդու Օրհուս կենտրոնում կազմակերպվեց քննարկում՝ Մտածում և գործում ենք միասին՝ թեմայով: Մասնակցում էին ներկայացուցիչներ Ալավերդու 11 ՀԿ-ներից, ՁԼՄ –ներից, Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը և քաղաքապետարանի այլ աշխատակիցներ: Քննարկման ժամանակ Ալավերդու քաղաքապետը ներկայացրեց համայնքի 2010թ. բնապահպանական ծրագիրը և նշեց, որ նախորդ տարվա համեմատ բնապահպանական վճարները կրճատվել են 1/3-ի չափով, ինչից ելնելով մի քանի կարևորագույն ծրագրեր դուրս են մնում: Այնուհետև ներկայացվեց քաղաքի նոր աղբավայրի նախագիծը, որն այժմ գտնվում է բնապահպանական փորձաքննության փուլում: Քննարկման արդյունքում արձանագրվեց ՀԿ-ների ցանցի ստեղծման անհրաժեշտության մասին, պատրաստվեց նամակ-դիմում քաղաքապետին 2011թ. բնապահպանական ծրագրի առաջարկներով, և քաղաքի համար ջրցան մեքենայի ձեռքբերման, ծառատունկերի, կանաչ գոտիների բարելավման նպատակով դիմել ACP ընկերությանը: ՀԿ-ների ներկայացուցիչները պայմանավորվեցին ակտիվ համագործակցել Օրհուս կենտրոնի, ՏԻՄ–ի հետ, միասնական աշխատանքի արդյունքում անպայման ապահովել հասարակության մասնակցության գործընթացը: Քննարկումներն այդքանով չսահմանափակվեցին. դրանք լինելու են շարունակական: / **Հասարակական քննարկում** /

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Նոյեմբերի 14-ին Թեղուտում կազմակերպել էր հերթական հասարակական ծառատունկը: VALLEX GRUP ընկերության բնապահպանական ծրագրով նախատեսված է 2009 -2010թ. գումարային 135 հա մակերեսով տարածքներում իրականացնել անտառապատման աշխատանքներ Շնող, Թեղուտ և Լեռնահովիտ համայնքներում: Այդ աշխատանքները ներառում են ոչ միայն ծառատունկը, այլ ընտրված տարածքների համար անտառային կատեգորիայի ապահովման գործընթացը: Այդ աշխատանքներն իրականացնելու համար մրցութային կարգով արդեն ընտրվել են կազմակերպություններ: Ծառատունկին մասնակցում էին ուսանողներ հայաստանյան տարբեր ԲՈՒՀ-երից, համյնքապետեր, հարակից գյուղերի բնակիչներ, ներկայացուցիչներ ՁԼՄ-ներից, ՀԿ-ներից, Ալավերդու Օրհուս կենտրոնն իր կամավորների հետ, Վալլեքս խմբի՝ աշխատակիցներ: Թեղուտ գյուղի հարակից 3000 մետր տարածքում այս անգամ տնկվեց 1000 ծառ(հացենի և լորենի): Ըստ մասնագետի նախորդ անգամ տնկված մրգատու ծառերի կաչոդականությունը 60-70 % է կազմել: Ծառատունկից առաջ մասնակիցները եղան Թեղուտի հանքանյութի նմուշների պահեստում(կեռնի պահեստ), այնուհետև այցելեցին վարջերս Թեղուտում հայտնաբերված 13-րդ դարի պատմամշակութային հուշարձաններ(դամբարաններ և գինու հնձաններ): Միջոցառումն ավարտվեց Տ. Պասկեիչյանի՝ Թեղուտ.Զավակների հացը՝ փաստավավերագրական ֆիլմի ցուցադրությամբ ու քննարկմամբ: / **Ծառատունկ** /

Կազմակերպիչ VALLEX GRUP

համակարգող Անուշ Էվոյան

Նոյեմբերի 16-ին Ալավերդու Օրհուս կենտրոնում Ալավերդու Արհեստագործական Ուսումնարանի հանքագործների բաժնի ուսանողների համար դաս անցկացվեց 'Կլիմայի փոփոխությունը՝ կարևորագույն խնդիր՝ թեմայով: Ուսանողներին ներկայացվեցին մեր մոլորակի գլոբալ էկոլոգիական խնդիրները: Նրանք դիտեցին 'Կլիմայի փոփոխություն՝ ֆիլմը: Դասի ավարտին դասախոսներին և ուսանողներին հետաքրքրող հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ, այնուհետև որոշեցին ստեղծել բնապահպանական հասարակական կազմակերպություն և համագործակցել Օրհուս կենտրոնի հետ:

/Մեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/

Կազմակերպիչ է. համակարգող Անուշ Էվոյան

Նոյեմբերի 18-ին փորձի փոխանակման նպատակով Հայաստան ժամանած Ղազախստանի ԵԱՀԿ Ատիռաու քաղաքի Օրհուս կենտրոնի աշխատակիցները այցելեցին Ալավերդու Օրհուս կենտրոն: Ղազախստանի մեր գործընկերներին հանդիպեց նաև Ալավերդու փոխքաղաքապետը: Քննարկվեցին Ալավերդի և Ատիռաու քաղաքների բնապահպանական և սոցիալ-տնտեսական խնդիրները, Օրհուս կենտրոնների կարևորությանն ու գործունեությանն առնչվող հարցերը: Հյուրերին հետաքրքրող բոլոր հարցերը պազաբանվեցին: Ձեռք բերվեց գործընկերության համագործակցություն: **/ Աշխատանքային հանդիպում/**

Կազմակերպիչ է. համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Նոյեմբերի 20-ին <<Ուրբան կայուն զարգացման >> հիմնադրամի նախաձեռնությամբ նախատեսված է Ալավերդի քաղաքում անցկացնել չորս հասարակական քննարկումներ՝ համայնքի առավել կարելու խնդիրներին վերաբերվող թեմաներով: Առաջին քննարկումը կազմակերպվել էր Օրհուս կենտրոնի աջակցությամբ՝ Ալավերդու թիվ 2 գրադարանում: Քննարկմանը մասնակցում էին Ալավերդու փոխքաղաքապետը, ներկայացուցիչներ հասարակական կազմակերպություններից, բիզնես ոլորտից, համայնքի բնակիչներ: Քննարկվեցին էլ առաջ քաշվեցին այնպիսի բնապահպանական խնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են ոչ միայն պետական կառույցների, այլև հասարակության, շահագրգիռ այլ կողմերի հետ: Մասնավորապես եղան առաջարկներ նոր աղբավայրի, ոչ կենտրոնական փողոցների մաքրության վիճակի, հողի մոնիտորինգի էլ մի շարք այլ խնդիրների հետ կապված: **/ Հասարակական քննարկում/**

Կազմակերպիչ է. համակարգող Անուշ Էվոյան

Դեկտեմբերի 2-ին Ալավերդու քաղաքապետարանը և Օրիուս կենտրոնը կազմակերպել էին համայնքի 2010թ. բյուջեի նախագծի հասարակական քննարկում, որին մասնակցում էին Ալավերդու քաղաքապետը, փոխքաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակիցներ, ԱՄՆ ՄԶԳ ժողովրդավարության և սոցիալական բարեփոխումների գրասենյակի ներկարացուցիչը, նաև ներկայացուցիչներ ՀԿ-ներից, ՋԼՄ – ներից, հիմնարկ-ձեռնարկություններից, ուսումնական հաստատություններից և բիզնես ոլորտից : Ալավերդիում առաջին անգամ բյուջեի նախագծի քննարկմանը մասնակցում էին նաև Ալավերդու թիվ 12 դպրոցի բարձր դասարանցիները: Ալավերդու քաղաքապետը մանրամասն ըստ հոդվածների ներկայացրեց համայնքի 2010թ. բյուջեի նախագիծը: Հատկապես կարեվորվեց այն փաստը, որ 2010թ համայնքը դիմավորելու է առանց պարտքերի, նշվեց, որ 1/3-ի չափով նվազել է բնապահպանական գումարների չափը: Հնչեցին բազմաթիվ հարցեր և առաջարկներ, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ քաղաքապետի և համապատասխան մասնագետների կողմից: / **Հասարակական քննարկում/**

Կազմակերպիչ եւ համակարգող Անուշ Էվոյան

Դեկտեմբերի 8-10 Լոռու մարզի Ալավերդի, Թումանյան եւ Ախթալա քաղաքներում Ալավերդու Օրիուս կենտրոնը «Կանաչ արահետ» ՀԿ-ն հետ համատեղ կազմակերպել էին սեմինար քննարկումներ՝ European Union, REC Caucasus եւ CENN- ի աջակցությամբ իրականացվող «Հողերի դեգրադացիայի մեղմացման եւ Հարավային Կովկասում աղքատության դեմ պայքարի համար հողային ռեսուրսների կայուն կառավարում» ծրագրի շրջանակներում: Սեմինար հանդիպումներին մասնակցում էին Ալավերդի,Թումանյան եւ Ախթալա քաղաքների ՏԻՄ մարմինների աշխատակիցները, որի նպատակն էր շահագրգիռ կողմերին ներկայացնել մինչ այժմ ունեցած Դեբեդ-Խրամի գետավազանի հողերի դեգրադացիայի մասին տվյալներն ու «Կանաչ արահետ» ՀԿ-ի կողմից արված վերլուծությունը: Քննարկման ժամանակ ընտրվեցին այն թիրախային տարածքները, որտեղ պատշաճ եւ մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո իրականացվելու է ծրագիրը: Ծրագիրն ակնկալում է շահագրգիռ կողմերի համագործակցությունը, քանի որ այն մշակվելու է իրենց իսկ ներկայացրած ՝ ընտրված համայնքների հողերի դեգրադացիայի հարցերին վերաբերող հետազոտությունների,փաստաթղթերի եւ այլ համապատասխան ինֆորմացիայի հիման վրա: /**Սեմինար-հանդիպում՝ Տեղեկատվության մատչելիություն/**

Կազմակերպիչ եւ համակարգողներ Ռուզաննա Միրզոյան, Անուշ Էվոյան

Ալավերդու Օրիուս կենտրոն
<եռ.՝ +374 253 2 41 12 , E-mail: info_alaverdi@aarhus.am

համակարգողներ
Ռուզաննա Միրզոյան +374 91 76 12 13, E-mail: mirzoyan_ruzanna@mail.ru

Անուշ Էվոյան +374 91 19 93 24, +374 91 76 13 30, E-mail:anushevoyan@rambler.ru